«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով ***անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝***

***1)*** *Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին.*

***2)*** *1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին.*

***3)*** *դատապարտյալներին.*

***4)*** *ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին.*

***5)*** *Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին.*

***6)*** *գործազուրկներին.*

***7)*** *միայնակ բնակվող կենսաթոշակառուներին.*

***8)*** *առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց.*

***9)*** *փախստականներին.*

***10)*** *Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր ապաստան ստացածներին.*

***11)*** *անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի փվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց.*

***12)*** *հոգեբուժական կազմակերպությունում բուժվող հոգեկան խանգարումներ ունեցող անձանց:*

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ***անվճար իրավաբանական օգնություն ցույց չի կարող տրվել սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց՝***

***1)*** *ձեռնարկատիրական բնույթի գործերով (ներառյալ՝ կորպորատիվ վեճերով).*

***2)*** *նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գույքային (գումարի) պահանջով գործերով, բացառությամբ այն գործերի, որտեղ անձը հանդես է գալիս որպես պատասխանող կամ պատասխանողի կողմում հանդես եկող երրորդ անձ.*

***3)*** *եթե առկա են դիմող անձի անվճարունակությունը ժխտող փաստական հավաստի տվյալներ:*